Արձանագրություն N 3

ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/9-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 մայիսի 2021թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Անի Ղարիբջանյանը, անդամներ՝ Մարիանա Դուրգարյանը, Ջուլիետա Բաբայան և քարտուղար՝ Ազնիվ Քոթանջյան:

Օրակարգ
Հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին

Ընդունել ի գիտություն, որ սույն թվականի մայիսի 12-ի հանձնաժողովի նիստի համաձայն «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություններ: Դրանով պայմանավորված հանձնաժողովի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով, իսկ «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ին ծանուցվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Սակայն «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից, սահմանված ժամկետում, շտկված փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդ համակարգում չեն կցվել :

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով "Գնումների մասին" ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 42-րդ կետը մերժել «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը 1-ին ենթակետի՝ հայտարարել գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժիններն չկայացած:

Համաձայն "Գնումների մասին" ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի նյութերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նշված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Մ. Դուրգարյան

_____ Ջ. Բաբայան

քարտուղար՝ _____ Ա. Քոթանջյան